




Հ Ա Յ Ա Մ Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԲԱՆԱԼԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՅ

Ա Մ Պ Ե Ր.



Ինչէն է որ երեկոյեան ու առա-
ւօտեան ամպերը կարմիր կերեւ-
նան:

— Վասն զի նախ այն ատենները
այն գոյնը աւելի գիւրաւ կրնայ
թափանցել թանձր ու չոր օդոյն
մէջ՝ քան թէ լուսոյն ուրիշ գոյները:

Երկրորդ, կարմիր ճառագայթները՝
դեղին ու կապոյտ ճառագայթներէն քիչ
խոտորած լինելով, աւելի երկար ատեն մեր
աչքին կտեսնուին՝ քան թէ անոնք:

Արշալուսոյն ու վերջալուսոյն պատճառը
ինչ է:

— Արեւուն ճառագայթներէն ոմանք՝ որ
մթնոլորտին վերի կողմերէն կանցնին, դէպի

երկրի վրայ կղարնեն, մինչդեռ արեւը հո-
րիզոնէն վար է. անով արշալոյս ու վեր-
ջալոյս կլինի:

Ամպերուն այլ եւ այլ շարժումնք տուողն
ինչ է:

— Գլխաւոր պատճառը հովերն են. բայց
եւեքտրականութիւնն ալ ազդեցութիւն ունի
անոնց շարժմանը վրայ:

Ի՞նչպէս կրնայ իմացուիլ թէ եւեքտրա-
կանութիւնը ազդեցութիւն ունի ամպերուն
վրայ:

— Վասն զի շատ անգամ՝ կտեսնեմք որ
երկու ամպ իրարու կհանդիպին, ու իրենց
եւեքտրականութիւնը մէկմէկու հաղորդե-
լէն ետեւ յանկարծակի աներեւոյթ կլինին:

Ամպերը ինչ բանի կուգան:

— Նախ՝ ցորեկուան սաստիկ տաքութիւնը կկտրեն:

Երկրորդ, արեւուն մտնելէն ետեւ չեն թողուր որ երկիրս շուտով պաղի:

Երրորդ, անձրեւներու մեծամեծ աղբիւրներ են:

Ինչպէս կլինի որ հովը երբեմն ամպ կը ժողվէ, երբեմն ալ ամպերը կփարատէ:

— Տաք ու շոգեկից հովը երբոր իւրմէ պաղ մթնոլորտի մը հանդիպի, իւր գոլորշիներուն մէկ մասը ամպ կլինին. իսկ երբոր հովը չոր է, ամպերուն խոնաւութեան մէկ մասն ինքը կծծէ, անով կցրուին կփարատին:

Արեւը մտնելու ատեն ամպերն որ կարմիր լինին՝ ինչո՞ւ համար երկրորդ օրուան աղէկ օդ ընելուն նշան կսեպուի:

— Վասն զի նշան է թէ օդը չոր ու խիտ է. որովհետեւ արեւուն կարմիր ճառագայթները միայն կթափանցեն այնպիսի օդոյն մէջ:

Ինչէն է որ առակ եղած է թէ «ձերմակ առաւօտ, լաւ ու սիրուն օդ»:

— Վասն զի նշան է թէ օդը այնպէս թափանցիկ է որ արեւուն բոլոր ճառագայթներն ալ կրնան մէջէն անցնիլ:

Ինչո՞ւ համար առակ եղած է թէ

«Այգուն ծիածան՝ անձրեւաց վախճան,

«Իսկ երեկորին՝ տայ յոյս ու խրախճան»:

— Վասն զի առաւօտեան ծիածանը՝ գէպի արեւմուտք երեւնալով, կցուցընէ թէ այն կողմը ամպոտ է, ուստի երկար ատեն ան-

ձրեւ պիտի գայ. իսկ երեկոյեան ծիածանը արեւելեան կողմը կերեւնայ, եւ կցուցընէ թէ արեւմուտքը բացուած է, եւ օդը պիտի շտկուի:

Ինչ է բակը կամ այն լուսաւոր շրջանակը որ երբեմն արեւուն եւ լուսնին չորս բոլորը կերեւան:

— Արեւուն կամ լուսնին լոյսերը իրենց քովի ջրային կամ սառած մասնիկներուն վրայ զարնելով՝ ետ կցուանան, ու մեղի բոլորածեւ՝ ձերմակ կամ գոյնզգոյն կերեւան:

Բակ երեւնալը ինչ բանի նշան է:

— Նշան է թէ օդոյն մէջ խոնաւութիւն շատ կայ, եւ քիչ ատենէն կամ մէկ պիտի իջնայ եւ կամ անձրեւ պիտի գայ:

Ինչէն է որ տաք ու ամպոտ գիշերները մարդուս վրայ սրանեղութիւն կուգայ, իսկ բաց ու պարզ գիշերները զուարթութիւն:

— Վասն զի երկրի տաքութիւնը չկրնար մթնոլորտին վերի կողմերը անցնիլ, այլ թանձր ամպերուն պատճառաւ գեանին երեսը կմնայ. իսկ պարզ գիշերները նոյն տաքութիւնը վեր ելնելով՝ չորս գին անոյշ զովութիւն մը կտիրէ:

Խոնաւ ու ամպոտ ատեն ինչո՞ւ կթուլնամք կամողձոտիմք:

— Վասն զի նախ՝ օդը գոլորշիքով լեցուն կլինի եւ քիչ թթուածին կունենայ.

Երկրորդ, խոնաւ օդը սովորական օդէն աւելի թեթեւ է.

Երրորդ, խոնաւ օդը մարդուս ջղերուն վրայ թուլութիւն կձգէ:

